



Primacy of the Armenian Apostolic Orthodox Church
of the United Kingdom and Republic of Ireland

His Grace Bishop Hovakim Manukyan, Primate

Saint Yeghiche Armenian Church Parish

Սբ Եղիշէ Հայոց Եկեղեցւոյ Ծուխ

Cranley Gardens, Kensington London, SW7 3BB

t. +44 (0)20 7373 8133 *Pastoral office* email.info@styeghiche.org.uk

www.styeghiche.org.uk <https://www.facebook.com/StYeghiche>

SUNDAY BULLETIN

1: List of the Sunday Reading,

06th November 2016

Bulletin No 46/16

ԵՓԵՍԱՑԻՆԵՐ 5:15-33 , Ephesians 5:15-33,

Therefore watch carefully how you walk, not as unwise, but as wise; redeeming the time, because the days are evil. Therefore don't be foolish, but understand what the will of the Lord is. Don't be drunken with wine, in which is dissipation, but be filled with the Spirit, speaking to one another in psalms, hymns, and spiritual songs; singing, and making melody in your heart to the Lord; giving thanks always concerning all things in the name of our Lord Jesus Christ, to God, even the Father; subjecting yourselves to one another in the fear of Christ. Wives, be subject to your own husbands, as to the Lord. For the husband is the head of the wife, and Christ also is the head of the assembly, being himself the savior of the body. But as the assembly is subject to Christ, so let the wives also be to their own husbands in everything. Husbands, love your wives, even as Christ also loved the assembly, and gave himself up for it; that he might sanctify it, having cleansed it by the washing of water with the word, that he might present the assembly to himself gloriously, not having spot or wrinkle or any such thing; but that it should be holy and without defect. Even so husbands also ought to love their own wives as their own bodies. He who loves his own wife loves himself. For no man ever hated his own flesh; but nourishes and cherishes it, even as the Lord also does the assembly; because we are members of his body, of his flesh and bones. "For this cause a man will leave his father and mother, and will be joined to his wife. The two will become one flesh." This mystery is great, but I speak concerning Christ and of the assembly. Nevertheless each of you must also love his own wife even as himself; and let the wife see that she respects her husband.

ԱԻԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ 8:49-57

Երբ ինք դեռ կը խօսէր, ժողովարանի պետին տունէն մէկը եկաւ եւ ըսաւ. «Աղջիկդ մեռաւ, ա՛լ մի՛ անհանգստացնէր վարդապետը»: Բայց երբ Յիսուս լսեց սաիկա՝ ըսաւ անոր. «Մի՛ վախնար, միա՛յն հաւատա, ու պիտի ապրի»: Երբ տունը մտաւ, ո՛չ մէկուն թոյլ տուաւ որ մտնէ, բայց միայն՝ Պետրոսի, Յակոբոսի ու Յովհաննէսի, եւ աղջիկին հօր ու մօր: Բոլորն ալ կու լային եւ կը հեծեծէին անոր վրայ. բայց ինք ըսաւ. «Մի՛ լաք. ան մեռած չէ, հապա կը քնանայ»: Անոնք ալ զինք ծաղրեցին, քանի գիտէին թէ մեռաւ: Իսկ ինք բոլորն ալ դուրս հանելով՝ բռնեց անոր ձեռքէն, ու գոչեց՝ ըսելով. «Աղջի՛կ, ոտքի՛ ելիր»: Անոր հոգին վերադարձաւ, եւ ան անմի՛ջապէս կանգնեցաւ: Յիսուս հրամայեց՝ որ անոր ուտելիք տան: Անոր ծնողները զմայլած մնացին, եւ ինք պատուիրեց անոնց՝ որ պատահածը ո՛չ մէկուն ըսեն:

Luke 8:49-57

While he was still speaking to her, a messenger arrived from the home of Jairus, the leader of the synagogue. He told him, "Your daughter is dead. There's no use troubling the Teacher now."

But when Jesus heard what had happened, he said to Jairus, "Don't be afraid. Just have faith, and she will be healed."

When they arrived at the house, Jesus wouldn't let anyone go in with him except Peter, John, James, and the little girl's father and mother. The house was filled with people weeping and wailing, but he said, "Stop the weeping! She isn't dead; she's only asleep."

But the crowd laughed at him because they all knew she had died. Then Jesus took her by the hand and said in a loud voice, "My child, get up!" And at that moment her life^h returned, and she immediately stood up! Then Jesus told them to give her something to eat. Her parents were overwhelmed, but Jesus insisted that they not tell anyone what had happened.

2: A short interpretation of the Gospel reading under the title The hard sayings'

Յայրոս հասարակ անձ մը չէր, այլ բարձր պաշտօն ու դիրք ունեցող մէկն էր: Ժողովուրդին կեանքին մէջ տիրական ու յարգուած ներկայութիւն էր: Ստեղծուած զանազան հարցերու վերաբերեալ վճիռներ արձակելու իշխանութիւն ունեցող մէկն էր: Յայրոս այս բոլորը ըլլալով՝ չքաշուեցաւ փռուելու Տէր Յիսուսի ոտքերուն առջեւ: Իշխանութեան գլուխը գտնուող ամէն մարդ, պէտք է Յայրոսէն ստրվի խոնարհիլ Տիրոջ ոտքերուն առջեւ: Բարձր դիրքերու ու պաշտօններու վրայ գտնուողներ, Յայրոսի օրինակով, երբ Յիսուսի կը հանդիպին, պէտք է աղաչե՛ն, խնդրե՛ն, հայցեն, արցունք թափեն, ծունկի գան ու երկրպագեն: Յայրոս ցաւ մը ունէր իր սրտին մէջ եւ եկաւ այդ ցաւին մասին խօսելու Յիսուսի եւ դարման մը գտնելու:

«Աղջիկս մահամերձ է: Յայրոս աղաչեց իր մահամերձ աղջկան համար: Դուն չունի՞ս հոգեպէս մահամերձ մէկը ընտանիքիդ կամ սիրելիներուդ մէջ, եւ եթէ ունիս, ի՞նչ կ'ընես անոր համար. կ'աղաչե՞ս Տիրոջ: Մահամերձ մարդիկը շատ են աշխարհի մէջ: Անապաշխար մարդիկը մահամերձ են: Մեղքի մէջ ապրող մարդիկը մահամերձ են: Առանց աղօթքի եւ առանց Աստուծոյ ապրող մարդիկը մահամերձ են: Յիսուսը իր սրտին մէջ իբրեւ իր անձին Փրկիչը չունեցող մարդը մահամերձ է: Դուն ապաշխարա՞ծ ես, խոստովանա՞ծ ես մեղքերդ Յիսուսի, խոստովանա՞ծ ես որ մեղքերովդ ցաւցուցած ես զինք, ընդունա՞ծ ես խաչով իր իրագործած փրկութիւնը, ընդունա՞ծ ես զինք իբրեւ Տէրդ ու Փրկիչդ, իբրեւ թագաւորդ ու առաջնորդդ:

"Աղջիկդ մեռաւ, ալ ինչո՞ւ կը յոգնեցնես Վարդապետը"» (Մր 5.35): Մահուան այս լուրը բերող մարդոց համար Յիսուս լոկ Վարդապետ մըն էր: Մէկը՝ որ կրնար ուսուցանել ու խրատել. մէկը՝ որ կրնար բուժել երբ տակաւին հիւանդը չէր մահացած: Իրենց համար Յիսուս անկարելին գործող Աստուածը չէր: Գուցէ անոնք կը հաւատային Քրիստոսի բժշկարար զօրու թեան, բայց կը հաւատային՝ այնքան ատեն երբ տակաւին աղջիկը ողջ էր: Բայց հիմա որ մեռաւ աղջիկը, կարծէք անոր հետ՝ իրենց հաւատքն ալ մեռաւ:

"Մի վախնար, միայն հաւատա (Մր 5.36): Եկող մարդիկը Յայրոսին յուսահատեցուցիչ խօսքեր ըսին, բայց մեր Տէրը յուսատու խօսքեր ըսաւ: Անոնք տրտմեցուցին Յայրոսը, բայց Յիսուս ուրախացուց զայն: Անոնք վշտացուցին, բայց Յիսուս մխիթարեց ու քաջալերեց:

«Յիսուս ներս մտաւ եւ ըսաւ անոնց.- "Ինչո՞ւ իրար անցեր էք եւ կու լաք. փոքրիկը մեռած չէ, այլ կը քնանայ"» (Մր 5.39): Յիսուսի այս արտայայտութիւնը ցոյց կու տայ որ ինք չ'ուզէր որ մարդիկ իրար անցնին եւ լան ու ողբան, երբ կը կորսնցնեն սիրելի մը: Հարկաւ սա չի նշանակեր թէ Յիսուս անտարբեր է մարդոց ցաւին հանդէպ: Ան լացաւ Ղազարոսի մահուան առիթով (Յհ 11.35): Ան կ'ուզէ սակայն, որ մարդիկ զուսպ ու չափաւոր ըլլան իրենց սուգին ու արցունքի հեղման մէջ: Յիսուս փոքրիկը կը կոչէ՝ քնացած: Ինչո՞ւ համար: Մենք գիտենք որ քնացած մարդը՝ շուտով պիտի արթննայ, կամ աւելի ճիշդ՝ իր ժամանակը ունի արթննալու: Հետեւաբար, Յիսուս փոքրիկը կը կոչէ՝ քնացած, ցոյց տալու համար թէ մեռելները որոնք գերեզմաններու մէջ կը գտնուին, ժամանակ պիտի գայ երբ պիտի արթննան եւ իրենց գերեզմաններէն դուրս գան (Յհ 5.28-29):

«Եւ ըսաւ.- "Տալիթայումի", որ կը նշանակէ "Աղջիկ, քեզի կ'ըսեմ՝ ել": Մարկոսի Աւետարանին մէջ երբեմն կը հանդիպինք Արամերէն բառերու կամ բացատրու- թիւններու եւ «Տալիթա կումի՛»ն անոնցմէ մին է: Արամերէնը Յիսուսի խօսած լեզուն էր: Աղջկան ուղղուած խօսքը, ուղղուած է ամէն մարդու. «Ով մարդ, քեզի կ'ըսեմ՝ ել: Դուրս ել մեղքի այն հորերէն որոնց մէջ կը լողաս, որպէսզի Տէրը քեզ իր գահին վրայ բազմեցնէ: Դուրս ել այն վիհերէն որոնց մէջ գլորած ես, որպէսզի Աստուծոյ սրտի սիրոյն մէջ մխրձուիս: Դուրս ել մոլութեանց փշալից պարտեզէն, որպէսզի արժանի դառնաս Աստուծոյ դրախտին մէջ քալելու: Դուրս ել ու բաժնուի՛ր չարերուն խումբերէն, որպէսզի հրեշտակներու բանակներուն դասակից ու երգակից դառնաս:

«Ոտքի ելաւ եւ սկսաւ շրջիլ»: Երանի՛ այս փոքրիկ աղջկան: Ան քալեց երկինքի ու երկրի Արարիչ Աստուծոյն սո՛ւրբ աչքերուն դիմաց: Ան քալեց իր Ստեղծիչին պատուերով: Ուրախութեամբ քալեց ու քալելով ուրախացուց բոլորը: Բժշկուա՛ծ քալեց ու քալելով բժշկեց կոտրած սիրտերը: Ոտքի ելաւ ու քալեց Տիրոջ խօսքին զօրութեամբ: Եկէք մենք ալ ոտքի ելլենք ու քալենք Տիրոջ խօսքին զօրութեամբ: Քալենք Տիրոջ հետ ու Տիրոջ համար: Քալենք Տիրոջ անունով ու Տիրոջ անուն համար: Քալենք Տիրոջ ճամբէն, սիրոյ ճամբէն, սրբութեան ճամբէն:

Տէր Արսէն Քահանա Սարդեան

3: List of the Feasts celebrated in the Armenian church

Հրեշտակապետեր Գաբրիելի և Միքայելի և ողջ երկնային գործի հիշատակության օր

Հայ եկեղեցու Հրեշտակաբանության համաձայն՝ հրեշտակներն անմարմին գոյացություններ են, իմացական, անձնիշխան, մշտաշարժ, անսեռ, անմահ և սպասավոր Աստծուն: Ըստ եկեղեցու սուրբ հայրերի՝ հրեշտակները, իբրև լուսեղեն էակներ, ստեղծվել են արարչագործության առաջին օրը՝ լույսի հետ միասին: Աստծո հրահանգով նրանք կոչված են սպասավորելու մարդ արարածին: Հետևաբար նրանք սպասավոր հոգիներ են, որոնք երկնաբնակ լինելով հանդերձ, իրենց մասնակցությունն են բերում նաև երկրավոր կյանքի ընթացքին, գործում են ժամանակի և տարածքի մեջ ապրող մարդու հետ, մարդու համար: Հրեշտակներին անվանում են նաև Աստծո պատգամավորներ, որոնք իրականացնում են Տիրոջ կամքը: Ս. Գիրքը վկայում է, որ նրանք բազմաքանակ են: Ըստ ս. Դիոնիսիոս Արիսպագացու՝ հրեշտակներն ունեն ինը դաս՝ Աթոռներ, Քերովբեներ, Սերովբեներ, Տերություններ, Զորություններ, Իշխանություններ, Պետություններ, Հրեշտակապետեր և Հրեշտակներ:

Գաբրիել անունը, որ նշանակում է «Աստծո այր», Բարձրյալի անմիջական պաշտոնյան է, որին վերապահված է Տիրոջ վերին խորհուրդներն ավետարանելու շնորհ: Այս հրեշտակապետը, որ ուղարկվել էր Տիրոջ կողմից, Ս. Կույս Մարիամին բարի լուրը հաղորդեց, իսկ Զաքարիային՝ ս. Հովհաննես Մկրտչի ծննդյան ավետիսը:

Միքայել անունը, որ նշանակում է «Ո՞վ է Աստծուն նման», Երկնավոր Արքայի փառքի և նրա ժողովրդի պաշտպանության համար մարտնչողն է, որին տրված է կառավարելու և թագավորելու շնորհ: Միքայել հրեշտակապետի անունը չորս անգամ վկայակոչված է Ս. Գրքում (Դան. Ժ 13, ԺԲ 1, Հուդ. Ա 9, Հայտ. ԺԲ 7):

Commemoration of Archangels Gabriel and Michael and the Entire Heavenly Class

According to the Angelology of the Armenian Church the angels are unfleshly, spiritual, independent, always moving, asexual, immortal creatures and God's servants. According to Church Fathers, the angels, as luminous creatures, have been created the first day of Creation, together with the light. By the God's order they are servants, they have been created to serve the human being. Therefore, they are servants who despite their being dyophysite, participate in the earthly life, act together with the human being living in time and space, they act for the human being. The angels are called the messengers and agents of God, who realize God's will. According to Dionysius of Areopagus (Areopagite), there are nine orders of angels – Angels, Archangels, Virtues, Powers, Principalities, Dominations, Throne, Cherubim and Seraphim.

Archangel Gabriel, whose name means “God’s man”, is God’s direct servant, who is granted the grace to evangelize the Lord’s mysteries. It was Archangel Gabriel, who was sent by the Lord to bring the good news to the Virgin about the birth of the Savior, and to Zechariah – to bring the good news about the birth of John the Baptist.

Archangel Michael, whose name means “Who is like God?”, is the advocate for the Heavenly King’s glory and His people’s protection, who is granted the virtue to govern and rule. The name of Archangel Michael is mentioned in the Holy Scriptures for four times (The Book of Daniel, 10:13, 12:1, The Letter from Jude 1:9, The Revelation to John 11:7).

ՈՂՋՈՅՆ Ս ՊՍՏԱՐԱԳԻ – KISS OF PEACE

ՈՂՋՈՅՆ ՏՈՒՔ ՄԻՄԵԱՆՑ, *Voghchooyn dook mimiantz*, Give greetings to one another,
ՔՐԻՍՏՈՍ Ի ՄԷՁ ՄԵՐ ՅԱՅՏՆԵՑԱԻ, *Kristos ee metch mer haidnetzav*, Christ is revealed among us,
ՕՐՀՆԱԼ Է ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆՆ ՔՐԻՍՏՈՍԻ, *Orhnial eh haidnootiunn kristosi*,
Blessed is the Revelation of Christ

4: Հոգեհանգիստը - Memorial Service

A memorial service at St Yeghiche Armenian Church is requested:

By Mrs Gladys, Mrs Suzy, Mr and Mrs Boghos Boghosian and Family for the soul of their Cousin the late **AMIRA MINAS OHANESSIAN**, who passed away in Texas USA on 20th October 2016 and the funeral took place in Amman Jordan on 5th November 2016.

By Mrs Gladys, Mrs Suzy, Mr and Mrs Boghos Boghosian and Family for the soul of their Brother, Husband, Father and Grandfather the late **ALEX BOGHOSIAN**, also for their parents **BOGHOS** and **MARGERETE BOGHOSIAN**, Aunty **VARTOUHY** and Uncle **LEON OHANNESSEIAN**, Cousins **Dr GARNIK** and **ANNA OVANESSIAN**, and for all the old and new deceased members of **BOGHOSIAN**, **OHANESSIAN** and **OVANESSIAN** families

Տիկ Զարուհի Քեօշկերեան, գաւակունք եւ թոռնիկներ. Տիկ Կրէյս Բազլաեան ընտանիք եւ գաւակներ Հոգեհանգիստ կ'իսնդրեն իրենց Սօր, Մեծ մօր եւ Մեծ մեծ մօր **Ազնիւ Նաճարեանի** հոգւոյն, հանգուցեալին մահուան քառասունքին առիթով.

May the Lord rest the souls of the deceased members of our community in peace and console their loved ones with the comforting power of His Holy Spirit.

ENQUIRIES:

For ecclesiastical/parish matters including requests for Christenings, Home Blessing (Dnorhnek), Hokehankist requests, Donations in Lieu of Flowers, arrangements for Marriages and other church administrative matters please contact Mr Viken Haladjian, telephone: **07970 146 280** or **020 7373 8133** or by emailing info@styeoghiche.org.uk

Alternatively please approach a member of the Parish Council at church every Sunday after Badarak.

Please remember our Church in your prayers.

ANNOUNCEMENT:

Your kind donations are gratefully accepted:

In order to meet the ever increasing church functioning expenses, The St Yeghiche Parish Council would like to appeal to all members of the community for their annual membership dues and generous donations. Please complete this form and hand your donation to the members of the Parish Council at the side entrance of the Church. Alternatively please post your cheque to: St Yeghiche Armenian Church Parish c/o Dr. Setrag Karanfilian, 13b Cranley Gardens, Kensington London, SW7 3BB. Please make your cheques payable to: "St Yeghiche Armenian Church".

Alternatively you can arrange your donation by bank transfer to our St Yeghiche Armenian Church Parish Ltd Account at:

HSBC, Acc.no: 42674432, Sort code: 40-02-26, IBAN: GB73MIL40022642674432, BIC: MIDLGB2106F

I wish to donate £to the St Yeghiche Armenian Church Parish.

Name:

Address:

Tel:.....Email:.....